բժշկաց եկեղեցի՝ արտաքոյ քաղաքին Երուսաղեմի սրբոյ։

Կոռոզի թագաւորեաց ամն Ի։ Յաւուրքս սորա գնաց Տէրն Պետրոս 'ի Հռոմս. և նենդեցին զԹագաւորն Գադիկ՝ չարութեամբ իշխանացն Հայոց. զի սա զԳադիկ երդմամբ տարաւ 'ի յԸնդոյ 'ի Կոստանդնուպոլիս, և խնդրէր զԸնի. և իբրև ոչ կամեցաւ Գադիկ տալ զքաղաքն Ընի, թագաւորն եդ առաջի նորա ՕԼԽ. բանալիս Ընդոյ, զոր իշխանքն Հայոց 'ի գաղտ 'ի Գադկայ՝ յղեալ էին զբանալիսն առ թագաւորն Կոստանդնուպոլսոյ. ոմանք ասեն զայս իր եղեալ 'ի ժամանակս Մոնոմախոյ՝ որ զկնի սորին հետադայի։

Մոնոմախ Կոստանդին՝ որ է մենամարտ, թագաւորեաց ամն ԺԲ. այր մեծամիտ և առատաձեռն. առ սովաւ խանգարեցաւ իշխանութիւնն թագաւորութեան Հայոց 'ի տանէն Շիրակայ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան